Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2020թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 2

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 4

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ 6

5. ԱՄՓՈՓՈՒՄ 11

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2020 թվականը համաշխարհային պատմության մեջ կամրագրվի առաջին հերթին որպես կորոնավիրուսային համավարակի ժամանակաշրջան: Վերջինս ունեցավ էական բացասական ազդեցություն ինչպես առողջապահական իրավիճակի, այնպես էլ տնտեսական զարգացումների տեսանկյունից: Մասնավորապես, փետրվարի 10-ի դրությամբ արձանագրվել է ավելի քան 107 մլն վարակակիր, և շուրջ 2.4 մլն մարդ զրկվել է կյանքից: Բացի այդ, Արժույթի միջազգային հիմնադրամը, հաշվի առնելով համավարակի շուրջ ձևավորված ռիսկերը, համաշխարհային տնտեսության համար 2020 թվականին կանխատեսում է ՀՆԱ-ի անկում՝ 4.4%-ի չափով[1]:

Այդուհանդերձ, COVID-19-ն իր հետևանքներով ոչ միայն ձևավորեց առողջապահական և տնտեսական ճգնաժամ, այլև ճանապարհ հարթեց կոռուպցիոն ռիսկերի ի հայտ գալու համար: Խնդիրն այն է, որ տնտեսական ճգնաժամի պայմաններում հասարակական հարաբերություններում առաջանում են բացեր և աղավաղումներ: Այս հանգամանքների ներքո մեծանում է ինստիտուցիոնալ արգելքների հաճախականությունը, որը տնային տնտեսություններին և տնտեսավարողներին հարկադրում է փնտրել զարտուղի ճանապարհներով առկա խոչընդոտները հաղթահարելու հնարավորություններ և ուղիներ: Իսկ ինչպես գիտենք, նման իրավիճակը այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել կոռուպցիայի ծավալների աճին:

Ավելին, կոռուպցիոն ռիսկերը ավելանում են նաև առողջապահական ճգնաժամերի պայմաններում: Նախ, նման երևույթներ կարող են ի հայտ գալ բուն առողջապահական համակարգում, քանի որ մեծանում է բժշկական ծառայություններից օգտվելու կարիք ունեցողների թիվը: Բացի այդ, առողջապահական ճգնաժամը կարող է պատճառ դառնալ սոցիալական լարվածության խորացման համար, որը նույնպես կնպաստի կոռուպցիոն ռիսկերի աճին:

Կոռուպցիան ունի անմիջական ազդեցություն երկրի սոցիալ-տնտեսական զարգացումների վրա: Ընդհանուր առմամբ՝ փոխազդեցության ուղղությունը բացասական է, թեև որոշ մասնավոր դեպքերում կոռուպցիան կարող է ստեղծել նախադրյալներ գործառնական ծախսերը (transaction costs) կրճատելու համար: Կոռուպցիան նաև խորացնում է անհավասարությունը և անարդարության ընկալումները տվյալ հասարակությունում՝ ազդելով սոցիալական

[1] IMF, World Economic Outlook Database, http://bit.ly/2JEeE0W (այցելվել է 10.02.2021թ.):

տրամադրությունների վրա: Իսկ ինչպես հայտնի է, սոցիալական գործոնները ունեն ոչ երկրորդային նշանակություն մակրոտնտեսական զարգացումներում:

Վերոհիշյալ իրողությունները նկատի ունենալով՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի պատրաստում է զեկույց կոռուպցիայի ընկալման մակարդակը գնահատելու համար: «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» (այսուհետ՝ ԿԸԻ) զեկույցը սկսել է հրապարակվել 1995 թվականից: Այս միջազգային նախաձեռնությունը կարևոր է հետևյալ պատճառով. կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է կոորդինացիայի բարձր մակարդակ: Խնդիրն այն է, որ կոռուպցիայի գործոնը ունի էական ազդեցություն, օրինակ՝ ֆինանսական ռեսուրսների միջազգային հոսքերի վրա: Այդ պատճառով միջերկրային բացասական էֆեկտները (cross-country externalities) չեզոքացնելու համար անհրաժեշտ է ձևավորել գլոբալ համագործակցային հարթակներ:

Կորոնավիրուսային ճգնաժամի ֆոնին՝ այս տարվա վերլուծությունը միտված է կոռուպցիայի հիմնախնդիրը դիտարկել առավել լայն համատեքստում՝ առողջապահական շոկերի ազդեցությունների ներքո: Վերլուծությունը ներառում է տվյալներ 180 երկրների կտրվածքով: Դիտարկվող երկրների ընտրանքի երկու երրորդը բնութագրվում է 50-ից ցածր միավորով: Վերլուծությունում արձանագրված միջին ցուցանիշը 43 է՝ հնարավոր 100 միավորից: Լավագույն 6 երկրներն են Դանիան, Նոր Զելանդիան, Ֆինլանդիան, Սինգապուրը, Շվեդիան և Շվեյցարիան: Վատագույն կատարողականը ցուցաբերել են Վենեսուելան, Եմենը, Սիրիան, Սոմալին և Հարավային Սուդանը:

Հայաստանը գրանցել է 49 միավոր և զբաղեցրել աշխարհում 60-րդ հորիզոնականը՝ Հորդանանի և Սլովակիայի հետ մեկտեղ: Այս ցուցանիշով Հայաստանը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում զբաղեցնում է միջինից բարձր դիրք:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԸԻ-ն ընդունում է արժեքներ 0-100 միջակայքում: **Որքան բարձր է ինդեքսի ընդունած արժեքը, այնքան բարենպաստ է իրավիճակը կոռուպցիայի ընկալման բնագավառում:** ԿԸԻ-ի միջոցով ագրեգացվում են բիզնես հատվածի և փորձագետների գնահատականները հանրային (պետական) հատվածի կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ: Հաշվարկի ժամանակ կատարվում են հետևյալ քայլերը.

1. **Ընտրել տվյալների աղբյուրը:** ԿԸԻ 2020-ը հաշվարկվում է՝ օգտագործելով 13 տարբեր աղբյուրներ 12 տարբեր ինստիտուտներից, որոնք ներկայացնում են կոռուպցիայի ընկալումները վերջին երկու տարիներին: Տվյալները վերաբերում են կաշառակերությանը, հանրային միջոցների մսխմանը, հանրային դիրքի օգտագործմանը՝ մասնավոր շահի նկատառումով, պետության «զավթմանը» և այլն:
2. **Ստանդարտացնել տվյալների աղբյուրները՝ 0-100 մասշտաբի ներքո:** Ստանդարտացումը կատարվում է տվյալների նորմավորման միջոցով: Մասնավորապես՝ յուրաքանչյուր տվյալից հեռացվում է վիճակագրական շարքի միջին թվաբանականը, և արդյունքը հարաբերվում է վիճակագրական շարքի ստանդարտ շեղմանը:
3. **Հաշվարկել միջինը:** ԿԸԻ-ն հաշվարկվում է որպես առանձին հայտանիշներով սահմանված ենթաինդեքսների պարզ միջին թվաբանական:
4. **Արձանագրել անորոշության աստիճանը:** ԿԸԻ-ն բնորոշվում է ստանդարտ սխալով և վստահության միջակայքով, որոնք քանակապես արտահայտում են տվյալներում առկա փոփոխականությունը: Այս պարամետրերի թվայնացումը թույլ է տալիս կարծիք կազմել տնտեսական համակարգում տեղ գտած անորոշությունների հատկանիշների վերաբերյալ:

Ինդեքսը հիմնված է տվյալների հետևյալ 13 աղբյուրների վրա.

1. **African Development Bank Country Policy and Institutional Assessment 2018**
2. **Bertelsmann Stiftung Sustainable Governance Indicators 2020**
3. **Bertelsmann Stiftung Transformation Index 2020**
4. **Economist Intelligence Unit Country Risk Service 2020**
5. **Freedom House Nations in Transit 2020**
6. **Global Insights Business Conditions and Risk Indicators 2019**
7. **IMD World Competitiveness Center World Competitiveness Yearbook Executive Opinion Survey 2020**
8. **Political and Economic Risk Consultancy Asian Intelligence 2020**
9. **The PRS Group International Country Risk Guide 2020**
10. **World Bank Country Policy and Institutional Assessment 2019**
11. **World Economic Forum Executive Opinion Survey 2019**
12. **World Justice Project Rule of Law Index Expert Survey 2020**
13. **Varieties of Democracy (V-Dem v. 10) 2020**

Տվյալների վերոհիշյալ շտեմարաններից յուրաքանչյուրը գեներացվում է համապատասխան միջազգային կազմակերպության կամ վերլուծական կենտրոնի կողմից՝ հիմնականում հարցումների իրականացման միջոցով: Այդպիսի կառույցներից են Համաշխարհային բանկը, Համաշխարհային տնտեսական

համաժողովը, Ֆրիդոմ Հաուսը և այլն: Նպատակն է՝ հասկանալ, թե ինչպիսին է գործադիր հատվածի ներկայացուցիչների, ինչպես նաև հասարակ սպառողների գնահատականը հանրային հատվածի կոռուպցիայի վերաբերյալ: Տվյալների որոշ աղբյուրներ կարևորում են առանձին տարածաշրջաններ կամ երկրների խմբեր, օրինակ՝ Աֆրիկա կամ Հարավարևելյան Ասիա: Առանձնակի շեշտադրում է կատարվում օրենքի իշխանությանը (rule of law), դատական համակարգի անկախությանը, հնարավորությունների հավասարությանը (equality of opportunity)՝ որպես կոռուպցիոն ռիսկերը զսպող հանգամանքներ:

Հայաստանի պարագայում ԿԸԻ գնահատման համար «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» կողմից օգտագործվել են տվյալների վերոհիշյալ 13 աղբյուրներից 6-ը՝ Bertelsmann Foundation Transformation Index (BF(TI)), Freedom House (FH), Global Insight Country Risk Ratings (GI), Political Risks Services International Country Risk Guide (PRS), World Economic Forum (WEF), Varieties of Democracy Project (VDEM):

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2020 թվականին Հայաստանը աշխարհի 180 երկրների շարքում զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը՝ ունենալով 49 միավոր: 2019-ի համեմատ ինդեքսը բարելավվել է 7 միավորով կամ 16.7%-ով: Բարելավումը 2018 թվականի համեմատ կազմել է 14 միավոր կամ 40.0%: Հայաստանը 60-րդ հորիզոնականը կիսում է Հորդանանի և Սլովակիայի հետ: Դիրքերի այսպիսի բարելավումը կապված է ինչպես կոռուպցիայի բնագավառում Հայաստանի արձանագրած առաջընթացի, այնպես էլ մրցակից երկրների համեմատաբար թույլ կատարողականի հետ:

Գծապատկեր 1. ԿԸԻ-ի արժեքները և հորիզոնականները ՀՀ-ում 2012-2020թթ.



2012-2020թթ. ԿԸԻ-ի ամենացածր արժեքը ՀՀ-ում դիտվել է 2016 թվականին, երբ 113-րդ հորիզոնականը նվաճվել է ինդեքսի 33 միավոր արժեքի պարագայում: Մյուս կողմից՝ ամենաբարձր արժեքը դիտվել է վերջին տարում՝ 2020 թվականին: Բացի այդ, 2016 թվականից ՀՀ-ում ձևավորվել է ԿԸԻ-ի աճի միտում, որը, միաժամանակ, ուղեկցվել է հորիզոնականի առաջմղմամբ, քանի որ մրցակից երկրներում դիտվել է ցուցանիշների նվազ բարենպաստ դինամիկա:

Աղյուսակ 1. ԿԸԻ-ի բաղադրիչները ՀՀ-ում 2016-2020թթ.[2]

Տարի/Ցուցանիշ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս		BF (TI)	FH	GI	PRS	WEF	VDEM
	Հորիզոնական	Ինդեքս						
2016	113	33	28	41	34	32	45	17
2017	107	35	33	42	35	32	47	20
2018	105	35	33	39	35	32	51	21
2019	77	42	45	39	47	32	60	32
2020	60	49	45	44	47	32	60	63

Ծանոթագրություն. Աղյուսակում ներկայացված հապավումներն ունեն հետևյալ բովանդակությունը. BF(TI)՝ Bertelsmann Foundation Transformation Index, FH՝ Freedom House, GI՝ Global Insight Country Risk Ratings, PRS՝ Political Risks Services International Country Risk Guide, WEF՝ World Economic Forum, VDEM՝ Varieties of Democracy Project:

Առանձին ենթաինդեքսների մասով հարկ է նկատել, որ 2020-ին 2019-ի համեմատ բարելավում է արձանագրվել FH (Freedom House) և VDEM (Varieties of Democracy Project) ենթաինդեքսների գծով: Մյուս կողմից՝ GI (Global Insight Country Risk Ratings), BF (Bertelsmann Foundation Transformation Index), WEF (World Economic Forum) և PRS (Political Risks Services International Country Risk Guide) ենթաինդեքսները մնացել են անփոփոխ: Եվ ընդհանրապես, համաձայն Աղյուսակ 1-ի՝ 2016 թվականից ի վեր բոլոր ենթաինդեքսները կա՛մ բարելավվել են, կա՛մ առնվազն մնացել են անփոփոխ: Բացառություն է կազմում 2018 թվականը, երբ FH ենթաինդեքսը նվազել է 3 միավորով՝ կազմելով 39 միավոր՝ 2017-ի 42 միավորի դիմաց:

Այսպիսով, ԿԸԻ-ի շեշտակի բարելավումը ՀՀ-ում 2020 թվականին մեծ մասամբ պայմանավորված է FH (Freedom House) և VDEM (Varieties of Democracy Project) ենթաինդեքսների աճով: Վերջինս հիմնականում արտահայտում է Հայաստանի առաջընթացը ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակության ակտիվության ասպարեզում:

[2] Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի պարագայում ԿԸԻ գնահատման համար «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» կողմից օգտագործվել են տվյալների 13 աղբյուրներից 6-ը:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

ԿԸԻ-ի հաշվարկում ընդգրկված 180 երկրների երկու երրորդը գրանցել է 50-ից ցածր միավոր: Արձանագրված միջին ցուցանիշը 43 է:

Ըստ Գծապատկեր 2-ի՝ դիտարկված տարածաշրջաններից ԿԸԻ-ի ամենաբարձր ցուցանիշով առանձնանում է Արևմտյան Եվրոպան և Եվրոպական միությունը՝ 66 միավոր: Լավագույն կատարողականը ցուցաբերել են Դանիան (88 միավոր), Ֆինլանդիան (85 միավոր) և Շվեդիան (85 միավոր): Վատագույն եռյակում են Հունգարիան (44 միավոր), Ռումինիան (44 միավոր) և Բուլղարիան (44 միավոր):

Ամենացածր ԿԸԻ-ն դիտարկվել է Անդրսահարյան Աֆրիկայի տարածաշրջանում՝ 32 միավոր (Գծապատկեր 2): Ընդ որում, ստորին հորիզոնականներում են Սուդանը (16 միավոր), Հարավային Սուդանը (12 միավոր) և Սոմալին (12 միավոր):

Առանձին երկրների մասով նշենք, որ կոռուպցիայի ընկալման տիրույթում ամենաբարձր արդյունքները գրանցվել են Դանիայում (88 միավոր), Նոր Զելանդիայում (88 միավոր), Ֆինլանդիայում (85 միավոր), Սինգապուրում (85 միավոր), Շվեդիայում (85 միավոր) և Շվեյցարիայում (85 միավոր): Մյուս կողմից՝ կոռուպցիայի ընկալման մակարդակը վատագույնն է Վենեսուելայում (15 միավոր), Եմենում (15 միավոր), Սիրիայում (14 միավոր), Սոմալիում (12 միավոր) և Հարավային Սուդանում (12 միավոր):

Նշենք նաև, որ 2012 թվականից ի վեր 26 երկրներ, հատկապես՝ Հունաստանը, Մյանմարը և Էկվադորը, բարելավել են ԿԸԻ-ի իրենց արժեքները: Միևնույն ժամանակահատվածում, սակայն, նվազել են 22 երկրների, հատկապես՝ Լիբանանի, Մալավիի և Բոսնիա և Հերցեգովինայի միավորները կոռուպցիայի ընկալման տիրույթում:

Գծապատկեր 2. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և որոշ տարածաշրջաններում 2020թ.



Աղյուսակ 2-ը հուշում է, որ Հայաստանը ԿԸԻ-ով Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում զբաղեցնում է միջինից բարձր դիրք: Առավել ցածր դիրքերում են գտնվում այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հունգարիան (44 միավոր), Բոսնիան և Հերցեգովինան (35 միավոր), Ռուսաստանը (30 միավոր): Տարածաշրջանում Հայաստանը, ի թիվս այլ երկրների, զիջում է Լիտվային (60 միավոր), Լեհաստանին (56 միավոր) և Չեխիային (54 միավոր):

Հարկ է նկատել, որ 2020 թվականին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում Հայաստանը նախորդ տարվա համեմատ արձանագրել է ԿԸԻ-ի ամենամեծ աճը՝ շուրջ 7 միավոր: Հորիզոնականի բարելավումը եղել է երկրորդ ամենամեծը՝ կազմելով 17՝ Ղազախստանի 19-ի դիմաց:

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի առաջատար հանդիսացող երկրներում՝ Լիտվայում և Սլովենիայում, ԿԸԻ-ն 2020-ին 2019-ի համեմատ չի կրել որևէ փոփոխություն (կազմելով 60 միավոր), և այս երկրները շարունակել են զբաղեցնել 35-րդ հորիզոնականը միջազգային վարկանիշային աղյուսակում:

Աղյուսակ 2. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում 2019 և 2020թթ.

Երկիր	ԿԸԻ 2020	ԿԸԻ 2019	Փոփոխությունը	Հորիզոնական 2020	Հորիզոնական 2019	Փոփոխությունը
Լիտվա	60	60	0	35	35	0
Սլովենիա	60	60	0	35	35	0
Լատվիա	57	56	1	42	44	-2
Լեհաստան	56	58	-2	45	41	4
Վրաստան	56	56	0	45	44	1
Չեխիա	54	56	-2	49	44	5
Հայաստան	49	42	7	60	77	-17
Խորվաթիա	47	47	0	63	63	0
Բելառուս	47	45	2	63	66	-3
Մոնտենեգրո	45	45	0	67	66	1
Հունգարիա	44	44	0	69	70	-1
Ռումինիա	44	44	0	69	70	-1
Բուլղարիա	44	43	1	69	74	-5
Թուրքիա	40	39	1	86	91	-5
Սերբիա	38	39	-1	94	91	3
Ղազախստան	38	34	4	94	113	-19
Կոսովո	36	36	0	104	101	3
Ալբանիա	36	35	1	104	106	-2
Բոսնիա և Հերցեգովինա	35	36	-1	111	101	10
Մակեդոնիա	35	35	0	111	106	5
Մոլդովա	34	32	2	115	120	-5
Ուկրաինա	33	30	3	117	126	-9
Ղրղզստան	31	30	1	124	126	-2
Ադրբեջան	30	30	0	129	126	3
Ռուսաստան	30	28	2	129	137	-8
Ուզբեկստան	26	25	1	146	153	-7
Տաջիկստան	25	25	0	149	153	-4
Թուրքմենստան	19	19	0	165	165	0

Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, որ 2020-ի դրությամբ՝ Հայաստանը կոռուպցիայի ընկալման բնագավառում գերազանցում է ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներին: Երկրորդ տեղը զբաղեցնում է Բելառուսը (47 միավոր), երրորդը՝ Ղազախստանը (38 միավոր), չորրորդը՝ Ղրղզստանը (31 միավոր), հինգերորդը՝ Ռուսաստանը (30 միավոր): Հայաստանը տարածաշրջանի առաջատարն էր նաև 2012-2015թթ., իսկ 2016-2019թթ. ժամանակահատվածում զիջում էր միայն Բելառուսին:

Գծապատկեր 3. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և ԵԱՏՄ մյուս երկրներում 2012-2020թթ.



Անմիջական հարևանների շրջանում Հայաստանը զիջում է միայն Վրաստանին, որի ԿԸԻ-ն 56 է: Հայաստանին հաջորդում է Թուրքիան՝ 40 միավորով: Չորրորդ տեղում Ադրբեջանն է, որի դեպքում ԿԸԻ-ն կազմում է 30: Տարածաշրջանի երկրների սանդղակը եզրափակում է Իրանը՝ բնորոշվելով 25 միավոր ԿԸԻ-ով (Գծապատկեր 4): Երկրների դասավորվածությունը նույնն էր նաև 2019 թվականին: Մինչև 2019 թվականը Հայաստանը մշտապես գտնվել է երրորդ հորիզոնականում՝ զիջելով Վրաստանին ու Թուրքիային և առաջ անցնելով Ադրբեջանից ու Իրանից:

Գծապատկեր 4. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և հարևան երկրներում 2012-2020թթ.



Աղյուսակ 3-ը հուշում է, որ 2020-ին 2019-ի համեմատ ԿԸԻ-ն մնացել է անփոփոխ Անդրկովկասյան տարածաշրջանի երկրներից Վրաստանում և Ադրբեջանում: Իրանում ԿԸԻ-ն նվազել է 1 միավորով: Իսկ Հայաստանում և Թուրքիայում այն բարելավվել է՝ համապատասխանաբար 7 և 1 միավորով: Նկատենք, որ 2019-ին 2018-ի համեմատ ԿԸԻ-ի բարելավումը ՀՀ-ում նույնպես կազմել է 7 միավոր:

Աղյուսակ 3. ԿԸԻ-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում 2018-2020թթ.

Երկիր	ԿԸԻ			ԿԸԻ փոփոխությունը		ԿԸԻ հորիզոնական			ԿԸԻ հորիզոնականի փոփոխությունը	
	2018	2019	2020	2018-2019	2019-2020	2018	2019	2020	2018-2019	2019-2020
Վրաստան	58	56	56	↓ -2	→ 0	41	44	45	↓ -3	↓ -1
Հայաստան	35	42	49	↑ 7	↑ 7	105	77	60	↑ 28	↑ 17
Թուրքիա	41	39	40	↓ -2	↑ 1	78	91	86	↓ -13	↑ 5
Ադրբեջան	25	30	30	↑ 5	→ 0	152	126	129	↑ 26	↓ -3
Իրան	28	26	25	↓ -2	↓ -1	138	146	149	↓ -8	↓ -3

Ինչ վերաբերում է հորիզոնականի փոփոխությանը, ապա նշենք, որ ՀՀ-ում 2020-ին 2019-ի համեմատ բարելավումը կազմել է 17 միավոր՝ 2018-2019թթ. 28 միավորի դիմաց: 2020-ին 2019-ի համեմատ բարելավվել է նաև Թուրքիայի ԿԸԻ-ն՝

5 միավորով: Ինչ վերաբերում է մյուս երկրներին՝ Վրաստանին, Իրանին և Ադրբեջանին, ապա արձանագրվել է դիրքի վատթարացում:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

ԿԸԻ-ն մեկն է այն ինդիկատորներից, որոնց մշտադիտարկումը կարևոր է ինչպես քաղաքականություն մշակողների, այնպես էլ բիզնեսի ներկայացուցիչների և տնային տնտեսությունների համար: Ինդեքսը հրապարակվում է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից, որի նպատակը պայքարն է կոռուպցիայի և նրա դրսևորումների դեմ:

2020 թվականին ԿԸԻ-ն ՀՀ-ում կազմել է 49 միավոր, և ՀՀ-ն դիտարկվող 180 երկրների շարքում զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը: ՀՀ-ն այս հորիզոնականը կիսում է Հորդանանի և Սլովակիայի հետ: 2019-ի համեմատ ինդեքսը բարելավվել է 7 միավորով կամ 16.7%-ով, իսկ դիրքը՝ 17 հորիզոնականով:

Հայաստանը ԿԸԻ-ով Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում զբաղեցնում է միջինից բարձր դիրք: Առավել ցածր դիրքերում են գտնվում այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հունգարիան, Բոսնիան և Հերցեգովինան, Ռուսաստանը: Տարածաշրջանում Հայաստանը, ի թիվս այլ երկրների, զիջում է Լիտվային, Լեհաստանին և Չեխիային:

2020-ի դրությամբ՝ Հայաստանը կոռուպցիայի ընկալման բնագավառում գերազանցում է ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներին: Երկրորդ տեղը զբաղեցնում է Բելառուսը, երրորդը՝ Ղազախստանը, չորրորդը՝ Ղրղզստանը, հինգերորդը՝ Ռուսաստանը:

Անմիջական հարևանների շրջանում՝ Անդրկովկասյան տարածաշրջանում, Հայաստանը զիջում է միայն Վրաստանին: Հայաստանին հաջորդում է Թուրքիան: Չորրորդ տեղում Ադրբեջանն է: Տարածաշրջանի երկրների սանդղակը եզրափակում է Իրանը:

Այսպիսով, ԿԸԻ-ի շեշտակի բարելավումը ՀՀ-ում 2020 թվականին մեծ մասամբ պայմանավորված է FH (Freedom House) և VDEM (Varieties of Democracy Project) ենթաինդեքսների աճով: Վերջինս հիմնականում արտահայտում է Հայաստանի առաջընթացը ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակության ակտիվության ասպարեզում:

Այդուհանդերձ, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպության փորձագետների գնահատմամբ՝ հանրային հատվածի կոռուպցիան հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է.

1. **Խստացնել վերահսկողությունը:** Կորոնավիրուսային համավարակը բացահայտեց պետական ինստիտուտների խոցելիությունը թափանցիկության առումով: Որպեսզի երաշխավորվի, որ ֆինանսական միջոցները չեն յուրացվում կոռուպցիոն շղթայի այս կամ այն օղակում և հասանելի են դառնում թիրախային խմբերին, հակակոռուպցիոն ինստիտուտներին անհրաժեշտ է օժտել բավարար անկախությամբ և ռեսուրսներով:
2. **Բարձրացնել պետական գնումների համակարգի թափանցիկությունը:** Պետական գնումների ոլորտի ընթացակարգերը և կանոնակարգերը, որպես կանոն, խրթին են և ոչ թափանցիկ: Արդյունքում աճում են կոռուպցիոն ռիսկերը՝ հանգեցնելով հանրային միջոցների ոչ արդյունավետ օգտագործման: Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել և պարզեցնել պայմանագրային ընթացակարգերը՝ բացառելով շահերի բախումը և նպաստելով արդար գնագոյացմանը:
3. **Ամրապնդել դեմոկրատական արժեքները:** Բազմաթիվ կառավարություններ կորոնավիրուսային ճգնաժամի պատրվակի ներքո նվազեցրել են իրենց հաշվետվողականությունը հասարակության առջև: Անհրաժեշտ է ձևավորել այնպիսի միջավայր, որը կբարձրացնի մարդկանց քաղաքացիական գիտակցությունը և ակտիվությունը՝ բացառելով կամ զսպելով չարաշահումները հանրային հատվածում:
4. **Տեղեկատվությունը դարձնել հնարավորինս հրապարակային:** Տեղեկատվության հասանելիությունը արդյունավետ կառավարչական որոշումների գրավականն է: Սա կարևոր է հատկապես արտակարգ իրավիճակներում, ինչպիսին է կորոնավիրուսային ճգնաժամը: Հրապարակելով անհրաժեշտ տեղեկատվությունը՝ կառավարությունը մասնավոր հատվածին կարող է փոխանցել որոշակի ազդակներ՝ կրճատելով անորոշությունը և ձևավորելով կանխատեսելիություն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*